



Երևան, 2 ապրիլի 2017թ.
20:00

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է: ՎԿԱՅՈՒՄ Է GALLUP ԵԼՔԻ ՀԱՐՅՈՒՄԸ

«Երկիր Մեդիա» առաջատար հայկական հեռուստաալիքի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ, ՀՀ-ում պառլամենտական ընտրությունների ընթացքում իրականացվել է ելքի հարցում (Exit Poll)՝ որպես 2017թ. ընտրական շրջանի հանրային կարծիքի ուսումնասիրության ծրագրի վերջնական փուլ: Ելքի հարցման նպատակն էր բացահայտել և վերլուծել քվեարկության օրը ընտրողների որոշումը: Ծրագիրը 2017-ի ապրիլի 2-ին իրականացրել են Հայկական սոցիոլոգիական սոցիալագիան և Baltic Surveys/The Gallup Organization-ը:

Քվեարկության օրը մոտ 30 000 հարցազրույց է անցկացվել ընտրատեղամասից դուրս եկած ընտրողների հետ: Հարցազրույցները անցկացվել են բոլոր 13 ընտրատարածքներում, Երևանի և մարզերի 125 ընտրատեղամասերում: Այս նախագծի շրջանակում աշխատել են ընդհանուր առմամբ 300 հարցազրուցավարներ, սուպերվայզերներ, փորձագետներ և ծրագրի ղեկավարներ:

Ընտրատեղամասերի ընտրությունը, որտեղ պետք է անցկացվեին հարցումները, նախագծվել էր այնպես, որ դրանք ընդգրկեն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը և ներկայացնեն մարզերը, քաղաքային ու գյուղական վայրերը և համապատասխանեն ընտրատեղամասերի չափերին (ընտրատեղամասերում գրանցված ընտրողների թվաքանակին):

Քվեարկությունը կատարած և ընտրատեղամասից դուրս եկած ընտրողներին խնդրել են լրացնել ելքի հարցման (Exit Poll) հարցաթերթիկը, որտեղ նշել են՝ թե որ կուսակցության և որ տարածքային թեկնածուի համար են նրանք քվեարկել: Հարցաթերթիկը լրացնելուց հետո հարցվողին խնդրել են այն տեղադրել ելքի հարցման համար հատուկ նախատեսված արկղի մեջ: Այսպիսով՝ հարցվողի պատասխանների գաղտնիությունը երաշխավորված էր: Հավաքված տվյալները յուրաքանչյուր հարցազրուցավար էլեկտրոնային միջոցներով ուղղակիորեն յուրաքանչյուր ժամը մեկ փոխանցել է Երևան՝ հետազոտական կենտրոնական գրասենյակ, որտեղ 5 փորձագետներից բաղկացած թիմը դրանք հաշվարկել և վերլուծել են՝ հատուկ մշակված մասնագիտական ծրագրով:

Հարցումն անցկացնելու համար ընտրվել է ընտրատեղամասից դուրս եկող յուրաքանչյուր 7-րդ ընտրող:

Exit Poll-ի արդյունքները ցույց են տալիս, որ 2017թ. ապրիլի 2-ի պառլամենտական ընտրություններին հայ ընտրողները քվեարկել են այսպես.

“Հայաստանի Հանրապետական” կուսակցություն	46%
«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք	25%
“Ելք” կուսակցությունների դաշինք	10%
“Հայ Հեղափոխական Դաշնակցություն” կուսակցություն	5%
«Հայկական Վերածնունդ» կուսակցություն	4%
“Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան” կուսակցությունների դաշինք	3%
“Կոնգրես-ՀԺԿ” կուսակցությունների դաշինք	3%
“Հայաստանի կոմունիստական” կուսակցություն	2%
“Ազատ դեմոկրատներ” կուսակցություն	2%
Պատասխան չկա	2%

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունն այս ծրագիրն իրականացրել է Baltic Surveys/The Gallup Organization-ի և Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիայի հետ: Gallup-ը համաշխարհային հեղինակավոր և ճանաչված ընկերություն է և Baltic Surveys/The Gallup Organization-ը Հայաստանում աշխատող ամենափորձառու միջազգային կազմակերպությունն է, որը 2005-ից մինչև այսօր Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի հետ իրականացրել է 20 հետազոտական ծրագրեր:

Ծրագրի ղեկավարներ.

Դոկտոր Ռասա Ալիսաուշկինե, Baltic Surveys/The Gallup Organization

(www.gallup.com).

Gallup-ը (The Gallup Organization) հանրային կարծիքի հարցումների և խորհրդակցության համաշխարհային առաջատար կազմակերպություններից է, ժամանակակից հանրային հարցման ծառայության ոլորտի «հիմնադիր հայրերից» մեկը: Դոկտոր Ջորջ Գելափին այն հիմնել է 1935թ.-ին ԱՄՆ-ում, որը հետագայում վերաճել է միջազգային առաջատար ընկերության:

“Baltic Surveys”-ը ամերիկյան Gallup Ինստիտուտի մասն է, առաջին մասնավոր, անկախ, հանրային կարծիքի ուսումնասիրության ընկերությունը Լիտվայում, որը հիմնադրվել է 1992թ.-ին, որպես Gallup-ի Լիտվայի գրասենյակ: Այն ESOMAR-ի, ԱՄՆ-ի առևտրային պալատի, Բրիտանական առևտրային պալատի, IAPC-ի և այլ միջազգային կազմակերպությունների անդամ է:

Baltic Surveys/The Gallup Organization-ը 25 տարի իրականացրել է հանրային կարծիքի հարցումներ և շուկայի վերլուծության ծրագրեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում (Հայաստան, Բելառուս, Մոլդովա, Ղազախստան, Ղրղզստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Ռուսաստան): Ընկերությունը ներկայացված է ESOMAR-ում 1992թ.-ից: Դոկտոր Ռասա Ալիսաուշկիենեն հանդիսանում է Gallup Europe-ի խորհրդի անդամ:

Պրոֆ. Գևորգ Պողոսյանը, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի (ASA) նախագահն է (www.asa.sci.am):

Հիմնադրվելով 1992թ.-ին՝ ASA-ն Հայաստանի հետազոտական առաջին և առաջատար կազմակերպություններից է: ASA-ն Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի (ISA), Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի (ESA) անդամ է, ինչպես նաև ESOMAR-ի անդամ է:

ASA-ն արդեն 25 տարի զբաղվում է հանրային կարծիքի ուսումնասիրությամբ և իրականացնում է սոցիոլոգիական հարցումներ տարբեր բնագավառներում՝ քանակական ու որակական սոցիոլոգիական հետազոտություններ, հանրային կարծիքի հարցումներ, քվեարկության օրվա ելքի հարցումներ (Exit Poll), շուկայի ուսումնասիրություններ, ՋԼՄ-ների հարցումներ և այլն:

Պրոֆ. Գևորգ Պողոսյանը սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նախագահության անդամ, բազմաթիվ միջազգային գիտական կազմակերպությունների ու մասնագիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ, 40 գրքերի ու մենագրությունների, ինչպես նաև մոտ 200 գիտական հոդվածների հեղինակ: